

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 ԹՎԱԿԱՆԻ N ----- Ա

ԱՔՐԱՀԱՄ ԱԶՆԱՈՒՐՅԱՆԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԶՈՐԱԿՈՉԻՅ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

«Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշմանը համապատասխան՝

**Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է**

1. Աբրահամ Գևորգի Ազնաուրյանին (ծնվ.՝ 1999 թ. հուլիսի 16-ին, բնակության վայրը՝ ք. Երևան, Սարյան փող. 24բ. շենք, բն. 24-25, 2017 թ. ընդունվել է աշխարհում բարձր վարկանիշ ունեցող ԱՄՆ Կալիֆոռնիայի Բերկլի համալսարան) պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տալ տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի ամառային զորակոչը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում գրավի պայմանագրի նոտարական վավերացման, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ գրավի իրավունքի պետական գրանցման պահից:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

### **1. Ընթացիկ իրավիճակը**

Աբրահամ Գևորգի Ազնաուրյանը (ծնվ.՝ 1999 թվականի հուլիսի 16-ին/ սույն թվականին ավարտել է UWC Դիլիջանի քոլեջը՝ միջազգային բակալավրիատի ծրագրով: Ներկայումս նա ընդունվել է «Luys.am» կայքում տեղակայված «Լույս»-ի լավագույն տասն օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններից ԱՄՆ Կալիֆոռնիայի Բերկլի համալսարան՝ գրականության և գիտության քոլեջ /բակալավր/: Ուսումնառությունը բակալավրի կրթական ծրագրով նախատեսված է 2017 թվականի օգոստոսի 16-ից մինչև 2021 մայիսի 14-ը:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն է դիմել Ա. Ազնաուրյանի հայրը՝ որդուն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն որոշմանը համապատասխան պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու խնդրանքով՝ մինչև ուսումնառության ավարտը՝ 2021 թվականի ամառային զորակոչը:

### **2. Անհրաժեշտությունը և ակնկալող արդյունքը**

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ Ա. Ազնաուրյանին հնարավորություն կընձեռվի ավարտել աշխարհի լավագույն բուհերից մեկը և ստացած գիտելիքները ներդնել Հայաստանի Հանրապետությունում ոլորտի զարգացման համար:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<Աբրահամ Ազնաուրյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ  
 ՀՀ պաշտպանության նախարարության կողմից արված դիտողությունների և առաջարկությունների

N	Նախարարության անվանումը	Դիտողություններ և առաջարկություններ	Նշումներ կատարման վերաբերյալ
1.	ՀՀ պաշտպանության նախարարություն	<<Աբրահամ Ազնաուրյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չկան:	
2.	ՀՀ արդարադատության նախարարություն	ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չկան:	
3.	ՀՀ Նախագահի աշխատակազմ	ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չկան:	